

# ՀԱՅՐԵՆԻԳ

## Լ Ր Ա Գ Ի Ր

### ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

#### ԱԶԳԱՅԻՆ

Յաւօք սրտի իմացանք դարձեալ թէ նորընտիր Գաղ. ժողովոյ անդամներէն հինգ հոգի գրաւոր հրատարական խըրկեր են և երէկուան նիստին ուր հրաւիրուած էին յատկապէս, հինգ հոգի միայն ներկայ գտնուեր են:

Ազգին այս վիճակին մէջ ազգային ծառայութենէ փախչելը մահացու յանցանք է. ուստի կը խնդրենք այդ էֆէնտիններէն որ հրատարականին ետ առնելով քիչ ժամանակի համար Ազգին ծառայելէ չը փախչին:

— Գեր. Տ. Եղնիկ Ծ. վարդապետ վաղը խօսիչիդի եկեղեցին Ս. Պատարագ պիտի մատուցանէ:

• • • Խմբագիր

Վերջին անգամ զրկած յօդուածս քիչ մը ուշ հրատարակելու համար, պարտաւորեցայ ուշացնել Մասիսի 23 յուլիս թուականաւ հրատարակած մէկ յօդուածին պատասխանը:

Չեր 357 թուով Մասիսի աշակողմեան քննադատին հրատարակած 12-13 ընդարձակ յօդուածոց վրայ ընդհանուր տեսութիւն մ'ըրած էի. անոր պատասխան պիտի ըլլար Մասիսի 23 յուլիս թուականաւ յօդուածը. բայց առանց ըստ օրինի հերքելու իմ ըսածներս և յառաջ բերած փաստերս, քմահաճ մեկնութիւն անուաներ է զանոնք և կնքեր է իր յօդուածը:

Յայտնի է որ այս կերպ վիճաբանութիւն չըլլար, իսկ քննադատութիւն բընաւ երբէք: Ուստի փոխանակ այն նիւթերուն անդրադառնալու, և ընթերցողները ձանձրացնելու, կ'ըսենք թէ աշակողմեան քննադատը քննադատու է այդ փաստին, խել մը զուարճաբանութիւններ և բացադանչութիւններ ընելով, որոնք լուրջ քննադատի մը գրուածոց մէջ շատ քիչ կը գործածուին կամ բնաւ չեն գործածուիր, խել մ'ալ քննադատութեան դասեր տալով մեղի, որոնց ինք պէտք ունի:

Նոյն յօդուածին մէջ կ'ըսէ աշակողմեան քննադատը. « Ինչ է քննադատելու առարկան և ինչ իմ պահանջումս. — օրինաց անթերի գործադրութիւնն: — Կը պատասխանենք: »

Օրինաց անթերի գործադրութեանը համար նախանձախնդիր ըլլալ գեղեցիկ

բան է, բայց օրինաց ամէն մէկ յօդուածին համար միևնոյն նախանձախնդրութիւնը պէտք է ցուցնել, և ոչ թէ այս կամ այն յօդուածին համար միայն:

Արդ հրատարեալ Գաղ. ժողովն իր պաշտօնավարութեան սկիզբը՝ տեսուչ խորհուրդներն ու Հոգաբարձութիւնները կիսով չափ նորոգելու իրաւունք ունէր, և ոչ գլխովին, մանաւանդ թէ պաշտօն վարելու համար տակաւին մէկ տարի պայմանաժամ ունեցող անձինքը՝ Սահմանադրութեան 44-րդ յօդուածին համաձայն չէր կրնար ինքնին արձակել իրենց պաշտօնավարութենէն, և ուրիշներն ընտրել անոնց տեղ: Սակայն Գաղ. ժողովն հակառակ վարուեցաւ Սահմանադրութեան 44-րդ յօդուածին:

Ան ատեն ո՛ւր էր Մասիսի աշակողմեան քննադատը:

Միևնոյն Գաղ. ժողովն էր Կոստանդնուպոլսէն Գաղ. ժողովն Սահմանադրութեան 44-րդ յօդուածը անգործադրելի կը թողու. և 65-րդ յօդուածն ալ գործադրել կը ջանայ:

Սահմանադրութեան 65-րդ յօդուածը որ սկիզբէն ցարդ խնդիր անգամ եղած չէր. բարեբաղդաբար Մասիսի աշակողմեան քննադատն ալ այդ յօդուածին անտեղութիւնը կը ճանչնայ, ուստի այդ մասին բնելիքներս զանց կ'ընեմ. բայց զարմանալով կ'ըսեմ թէ 1860—63ի Գաղազեան և Նորատուճիկեան էֆէնտիք և այլք, որ Կոստանդնուպոլսէն կը վերաբերէին, 1877 ին Սահմանադրութեան 65-րդ յօդուածին, այն է՝ ըսէն 75 զըջով ծախելու կուսակցութեանը կը յարին ոչ թէ օրինաց անթերի գործադրութեան նախանձախնդրութեամբ, այլ իրենց կուսակցութիւնը զօրացնելու դիտմամբ. և այս պատճառաւ ալ Սահմանադրութեան 44-րդ յօդուածը չգործադրեցին:

Սակայն իրաւացի դիտողութիւն մը կ'ընէ աշակողմեան քննադատը թէ Ազգային ժողովը պէտք է իր հեղինակութեամբ նախ օրինաց այդ տրամադրութիւնը ջնջէ ու բարեփոխէ, յետոյ ըստ այնմ եկած ընտրութիւնները վաւերացնէ:

Ասոր ալ կարճ պատասխան մը տանք: Սահմանադրութեան մէջ կան յօդուածներ, որոնց փոփոխութեանը մասին Ազգային ժողովն իրմէ դուրս ուրիշ հեղի-

նակութեանց կարծիքն առնել կը պարտաւորի. օրինակի համար, ընտրողը Օսմանեան հպատակ պէտք է ըլլան, Երեսփոխանական ժողովոյ մէջ եօթն աստիճանաւորք պիտի գտնուին, և ին. ասոնց համար նախ Բ. Դրան հաճութիւնն առնուլ կը պարտաւորի. ասոնց կարգէն է նաև 75 զըջ. ի խնդիրը, և անոր յարակից անձնական արժանեաց խնդիրը. վասն զի ինչ հիման վրայ կրնանք ազգին վարժապետաց և հեղինակաց հետ հաւասար ընտրողութեան իրաւունք տալ արքունի դիւաններուն և տէրութեան ուրիշ պաշտօններուն մէջ գլխունող անձանց: 75 զըջ. ի խնդիրը ազնուապետութեան հոտ ունի իր մէջ, և բացարձակ կառավարութեան մը հպատակ եղող սահմանադրական ազգը մը չնորհեալ չափաւոր միջոց մ'է, միջոց մը՝ որ Ազգին դրեց, բարուց և սովորութեանց համաձայն չէ: Անոնք որ կ'ուզեն Սահմանադրութիւնը զղուելի ընել Հայ ժողովրդին, 75 զըջ. ի խնդրոյն պինդ մը կրնան փաթաթուիլ:

Սակայն Ազգային ժողովն բողոքովին լուռ կեցած չէ այդ մասին. բան մ'ըսած է. և պէտք է որ զայն ալ յայտնենք աստ: Բացում 1874 թմին, նիստ ժ. 21 Մարտ 1875. Երես 231. Էջ Ա. Տըրոց ծրագրին վիճաբանութեանը կարգին հետեւեալը կայ:

« Յօդ. 3. — « Առ նուազն 75 զըջ. տարեկան տուրք վճարողն ըստ Սահմանադրութեան երեսփոխանական ընտրող և ընտրելի ըլլալու իրաւունք կ'ունենայ »:

« Արեւմտեալ էֆ. — Այս ալ Սահմանադրութեան մէկ յօդուածն է, որուն վերայ վիճաբանութիւն ընելու հարկ չկայ: Բայց եթէ կը ներուի, ես ոչ իբրև ատենապետ, այլ իբր անգամ ժողովոյն փոքրիկ դիտողութիւն մը կ'ընեմ. այս յօդուածին տեղը հոս չէ, ընտրական օրինաց մէջ պէտք է դնել. ուստի վերցընել կ'առաջարկեմ չէ թէ մերժելով »:

« Չայեք. կը կրկնենք »:

« Մոյն առաջարկութիւնը քուէի դըրուելով և ընդունուելով, միաձայնութեամբ որոշեցաւ ծրագրին երեսն յօդուածը նոյն օրէն քառու »:

Ազգային ժողովոյ այս որոշմանը հակառակ, հրատարեալ Գաղազեական ժողովը Տրոց Հրահանգ մը հրատարակեց անցեալ տարի, յորում կ'ըսէ, « Երես-



րակէ (օգոստոս 7) ըն նախագահու-  
թեամբ Ամեն Սըբազանդատրիարք Հօր՝  
ժամը 6 ին :

1877 Օգոստ . 3 Մնամ  
Ս. Լ. Վարժարան Կոթարար  
Ի Գուռ-Գալու Տիտուզ և Լուսաւորչեան  
Վարժարանի  
Սոսոս Բահանայ

**ՅԱՆԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱԾ՝ ԵՊԱՍՏ**

**ԵՐԶԵՆԱԾԻ ՔՐԻՍՏԻԱՆԱՆ ՎԱՐժԻ:**

Ամեն . Խրիմեան Ս. Հայրիկ . 1 Հրաւի-  
րակ Արարատեան , 1 Գրախօր Ընտանիք ,  
1 Մարգարիտ Արքայութեան Երկնից ,  
1 Խաչի ճառ , 1 Հայրենասիրութիւն Հա-  
յոց :

Արժ . Պօղոս վարդապետ Նաթանեան  
2 Տեղեկագիր Սեբաստիոյ :

Արժ . Արիստակէս վարդապետ Տ.  
Սարգսեանց 1 Պանդուխտ Լանեցին :

Պ. Ս. Ամատունի 1 Գիւան . Վէպք և  
Տաղք , 1 Տրամախօսութիւնք յաւերա-  
կունն Հայաստանի , 1 Հրաչարք Բնու-  
թեան , 1 Առողջարանութիւն , 1 Յով-  
հաննա տ'Արք , կամ Օրէնանի օրիորդք ,  
1 Աստղիկ Հայրենեաց , 6 Չանազան դա-  
սադրքեր :

Պ. Մինաս Չերազ 1 Գրական Փորձեր ,  
1 Աղգային Դաստիարակութիւն :

Շարունակի  
Յ. Շարունակ

**ՔԱՂԱՔԱԿԱՆ**

Խային պօղապի և Երփքայի կիրճե-  
րը Սիւլէյման և Շաքիր փաշաներէն ա-  
ռանց ընդդիմութեան գրաւուած են :

Սալիմ փաշա Օսման բազարի մօտ թըշ-  
նամուդն հետ կուր մ'ընելով, Ռուսք մեծ  
կորուստ ունեցեր են : Վիտինի քով ալ  
Ռուսական թնդանութեամբ նաւ մը խոր-  
տակուեր է : Վիտինի կառավարիչին  
խօսքին նայելով , Վիտինի Ռուսական  
գունդին մէկ մասը գետը անցնելով  
դէպ ի թուրնօ - Սէվէրէն քաւեր է :  
Դանուրէն առ այժմ ուրիշ լուր չկայ :

Իսկ Ասիայէն Տէրվիշ փաշա կը հեռագ-  
րէ թէ Ռուսական զօրաց վրայ յարձա-  
կում մ'ընելով , 200 հօգի կոտորեր է :

Գարատաղի սահմանաց վրայ ալ փոքր  
կռուներ եղած են , ինչպէս հեռագիրը  
կը ծանուցանէ :

Լէվանթ կըսէ թէ Մէհմէտ Ալի փա-  
շա Պուլղարիոյ մէջ ղթնամին կ'ստիպէ  
որ կարելի եղածին չափ շուտով ընդհա-  
նուր կուրի մը բռնուի սպասած նոր  
զօրութիւնները դեռ չեկած :

— Հավասի հեռագիրը Միտհաթ փա-  
շայի հինգշաբթի օր փարիզ հասնելը կը  
ծանուցանէ , ուրկէ Լօնտրա պիտի եր-  
թայ եղեր : Այս շաբթուան թայմը  
Միտհաթ փաշայի հետ ըրած տեսակցու-  
թիւնը հետեւեալ կերպով կը պատմէ :

« Միտհաթ փաշա կը կարծէ թէ , աշ-  
նան վերջը կամ ձմռան մէջ պատերազ-  
մը դիւանագիտական միջամտութեամբ  
մը կրնայ վերջանալ . Օսմ . բանակաց  
գեղեցիկ գիրքը և տրամադրութիւնը  
կը գովէ , որք յարձակողական ըլլալով,  
պատերազմը կրնան երկարատև ընել :

Միտհաթ փաշա կը յուսայ թէ Եւրոպա  
պատերազմէն վնասուելով չպիտի թողու-  
որ այս վիճակը շարունակէ և թէ ամէնքը  
պատերազմիչներն ալ մէկտեղ հաշուե-  
լով , պատերազմին դադարելուն մէջ մեծ  
շահ ունին » :

— Լոնտրայէն Պ. Րօչիլտ 500 անգղիա-  
կան ոսկի շնորհեր է Անգլիանուպօլսոյ  
պատասպարելոց ընկերութեան : Սոյն ըն-  
կերութիւնը մինչև ցարդ 800 էն աւելի  
Մահմետական , Պուլղար և Երբայեցի  
փախստեայ խնամեր է :

— Մայրաքաղաքիս Անգլիական հիւ-  
պատոսը երէկ Անգլիանուպօլիս մեկնե-  
ցաւ տառապելոց վիճակը անձամբ քըն-  
ներու և դարման տանելու համար :

— Բավարնայի դէպքին առթիւ 1500ի  
չափ յոյն կին և տղայ վարնա ապաս-  
տանած ըլլալով , վարնայի բնակիչներէն  
12 հօգի Սիրիլ արքեպիսկոպոսին նախա-  
դահութեան ներքեւ մասնաժողով մը  
կազմեր են օգնութիւն փութացնելու  
համար և քիչ ժամանակի մէջ 12,000 ղշ  
վառելիք և հագուստ հայթայթելով ,  
կարօտելոց բաժներ են : Մայրաքաղաքիս  
Յոյն վաճառականներէն շատեր ալ օգ-  
նութիւն խրկեր են : Եունաց Պատրիար-  
քարանն ալ այս առթիւ երկու մասնա-  
ժողով կազմեր է մէկը Ղալաթիա , միւսը  
Կ. Պօլիս :

— Անգլիանուպօլսոյ մէջ օգոստ . 9էն  
15 , 21 պուլղար կախուեր են :

— Անգլիական խորհրդարանին երես-  
փոխաններէն Մըթթըր ձէյմըս Ասպուրկ  
Եւրոպական բանակատիրին գնաց երէկ :

— Պետական խորհրդոյ նախարարի  
խորհրդական Միտհաթ պէյ , Բուրճէն-  
« լեմնէ ելլելէ աստիճան բարձրացաւ :

— Եունուէն եկած հեռագիր մը կը  
ծանուցանէ թէ Բուսուխի ռմբակո-  
ծութիւնը կը շարունակէ և Օսմ . մարտ-  
կոցները կը դիմադրեն :

Գունդ մը Չէրքէշներ հինգշաբթի օր  
Բլէվլայի մօտ կուր մ'ընելով Ռուսական  
ձիաւոր վաշտի մը հետ , 20 հօգի սպան-  
ներ և թշնամին փախուցեր են :

— Լոնտրայէն եկած հեռագիր մը կը-  
սէ թէ Ռուսաց սպասած զօրութիւննե-  
րը սեպտեմբերէն առաջ չեն կրնար պա-  
տերազմի դաշտը հասնիլ :

— Ս. Փէթրսպուրկէն լորտ Լօֆթիւ-  
սի կողմանէ լորտ Տէրպիի զարնուած  
հեռագիր մը կը ծանուցանէ թէ Բուսու-  
խիոյ անկախութիւնը Ռուսիոյ կողմանէ  
ոչ իրաւամբ այլ արդեամբ կատարուած  
իրողութիւն մը համարուած է , խնդրոյն  
լուծումը Եւրոպական տէրութեանց հա-  
ւանութեանը ձգուելով : Կորչաքօվ իշ-  
խանը ըսեր է նաև թէ Աւստրիա ալ  
Սերվիոյ մասին մի և նոյն կերպով կը խոր-  
հի . և թէ Չարը փափաք յայնանձ է  
Սերվիոյ որ սա չեզոք մնայ :

— Վիեննայէն ուրիշ հեռագիր մ'ալ  
Սերվիոյ պատերազմական դունդեր  
կազմելը կը ծանուցանէ :

— Պօսնայի մէջ ժողովուրդը կեդրո-  
նական իշխանութեան դէմ գրգռող  
ռուսական գրեր բռնուեր են :

— Ռուսաստանի մէջ ծանրաբայլ յե-  
ղափոխութիւն մը կը տեսնուի : Պուլղա-

րիա զօրք զրկուելը սուտ ելեր է :  
— Վաճառական Էսայեան Յ. և Մ.  
Եղբարք ամսէ ամիս տասը ոսկի տալ  
խոստացեր են կառավարութեան մինչև  
ցվերջ պատերազմի :

— Երեք Անգլիական նաւ Միջերկրա-  
կան 3000 հօգի բերելու վրայ են :

— Վէրիթէ լրագիրը կըսէ թէ վեհ .  
Սուլթանը շաբաթ օր Օսման փաշայի եր-  
կու տղաքները պալատը կանչելով , հայ-  
րաբար ընդուներ և մեծին վեց հազար ,  
պղտիկին չորս հազար , մօրը ութը հա-  
զար և ծառային երկու հազար շուրուշ  
նուիրեր է :

— Թայմըզ կըսէ թէ Փլէվլայի և Էս-  
կի-Չաղարայի յաղթութեանց առթիւ  
կալիպթայի միլիթներուն մէջ գոհարա-  
նական աղօթքներ կարդացեր են : Տեղ-  
ւոյն լրագիրները ամեն օր պատերազմի  
լուրեր կը հրատարակեն և ի հարկին յա-  
ւելուած ալ կը հանեն եղեր :

— Թայմըզի Պէրլինի թղթակիցը օգոստ .  
5 թուով հետեւեալ հեռագիրը կուղղէ :

« Բուսուխական զօրաց Դանուբ խըր-  
կուելը և Սերվիոյ մէջ գաղտնի գոր-  
ծուած պատերազմական պատրաստու-  
թիւնք , նոյնպէս Բուսուխական երկրորդ  
զօրաբաժնի մը նիքօքօլի խրկուելը և  
Պէրլինատի մէջ զօրաց ի գէն կոչուելը ,  
կը կարծուի որ Աւստրիոյ ձեռք առնե-  
լիք միջոցները պիտի փութացնեն : Ա-  
ւստրիա որոշած է Դանուբեան իշխա-  
նութիւնները մեծնալէ արդիւիլ :

« Փլէվլայի մէջ Ռուսաց կրած պարտու-  
թեան վրայ Չարը Աւստրիոյ կայսրէն  
խնդրեր է որ Ռուսաց Սերվիա մտնելու  
և ասոնց Սերվիական զօրաց հետ մէկ-  
տեղ գործելու մասին ըրած ընդդիմու-  
թիւնը ետ առնու : Աւստրիոյ կառավա-  
րութիւնը կայսեր զինուորական խոր-  
հրդականաց խնդրանաց վրայ զօրու-  
թիւն համախմբելու որոշած ըլլալով , որ-  
պէս զի Սերվիոյ և Բուսուխիոյ պատե-  
րազմի միջամուխ ըլլալը հակակոչ է , Չա-  
րին այս առաջարկութիւնը այնպիսի վի-  
ճակի մը մէջ կը դնէ զԱւստրիա որ սա  
կը ընելիքը վերջնապէս պիտի որոշէ :  
Կհաւաստեն թէ Կորչաքօֆ իշխանը  
Ռուս զօրավարաց Սերվիա մտնելու դի-  
տաւորութեանը ունայն տեղը դիմադրեր  
է » :

— Թայմըզի վիեննայի թղթակիցն ալ  
այս նիւթին վրայ գրած մէկ նամակին  
մէջ հետեւեալ տողերը կը գրէ :

« Եթէ Սերվիա հակառակ Ռուսիոյ  
ազդարարութեան , պատերազմական  
դէպքերուն հաղորդակցելու ուղէ , Աւստ-  
րիա պիտի պարտաւորի զգուշութեան  
միջոցներ ձեռք առնուլ : Սա Պէրլինատը  
պիտի չգրաւէ , որովհետև արդիւնքն  
աննշան կըլլայ . այլ Սերվիոյ , Պօսնիոյ և  
Հին Սերվիոյ սահմանակից գաւառները  
պիտի գրաւէ Սերվիացոց ճամբան կըտ-  
րելու և այսպէս ուղուած հողին վրայ  
արշաւանքն արդիւիլու համար » :

— Մայրաքաղաքիս նախկին անգղ-  
դեսպան Սըր Էլիօթի նախագահութեան  
ներքեւ անցեալ տարի կարօտելոց հա-  
մար կազմեալ ընկերութիւնը 19,205 օսմ .  
ոսկի հաւաքեր և 15,970 ղ կարօտելոց  
բաժներ է :

— Լեվանթի կարնոյ թղթակիցը օգոստոս 2 թուով հետևեալը կը գրէ :

« Ամէն կողմանէ առնուած տեղեկութիւնք կը հաւաստեն թէ Ասիոյ մէջ ռուսական բանակը նորէն դործի սկսեր է : Կրան-Տիւրք-Միշէլ Երեւան կը գրտնուի, ուր կը գումարին ձախ թեւին զօրութիւնները, այս անգամ վանայ վրայ յարձակողական դիրք բռնելու համար : Ռուսական կեդրոնն ալ զօրացուցած են այս կողմը յուլիս 11 ին փոքրիկ կռիւ մը տեղի ունեցաւ առանց արդիւնքի, և սակայն մինչև 15 օր մեծ բաներ կապասուին այս կողմը : Ռուսական ալ թեւը որ Արտահանի ձամբուն վրայ կը գտնուի, աւելի դործունէութիւն ցըցուց : Ամսոյս 25 ին 20,000 հոգիով ստուարացաւ և իւր յառաջապահ գունդը դէպ ի բէննէք ձամբայ հանեց որոնք մեր գունդերէն մէկ քանին առ ոտն կոխելով Հօրվանք գրաւեր են, մինչդեռ մեծ բանակն ալ Բէննէք հասեր և առանց հարուած մը նետելու զայն գրաւեր է : Հօրվանք նուազ կարևոր գիւղաքաղաք մ'է քօլայի ուղղութեամբ : Նոր զինուորական իշխանութիւններէ Օլթիի մէջ գունդեր կը պատրաստուին տաճկական ձախ թեւ մը կազմելով Ռուսաց ընթացքը դիւրաւ արգիլելու համար :

« Քանի մը հազար քիւրտ Պայազիտ իսմայիլ Հաքքը փաշային բանակը ձգեցին, վանայ մօտ գտնուած իրենց գիւղերը երթալ պաշտպանելու համար, լքելով որ Շէքէք ցեղէն պարսիկ քիւրտերու գլուխ Ալի խան յարձակում ըրեր է հոն : Թէ ինչ կերպով կը պատմեն այս հետաքրքրական դործն, ահաւասիկ : Կերեւի թէ ահարկու Շէյխ ճէլալէտտի-նի բանակը կազմող քիւրտերէն 5000 հոգին աւելի պարսիկ են քան թէ տաճիկ վան զի իրենց հողերը Շահին երկիրներուն մէջն է, որոնք ռուսաց դէմ կըռուելու համար սահմանազուլին անցնելու պարտաւորեր են : Ասոր վրայ Ռուսական կառավարութիւնը գանգատ ըրեր է Պարսկական կառավարութեան իբրև չէզոքութեան բռնաբարութիւն, և Շահը պարտաւորեր է յատկապէս քուլի խան անուն մէկը խրկել աւ գործը հասկնալու համար, հրաման ընելով որ Օսմ. բանակին մէջ գտնուող քիւրտերուն գիւղերը այրեացաւեր ընէ : Շէքէք քիւրտերուն ցեղին գլուխ Ալի խան որ վանայ սահմանաց քիւրտերուն աւանդական թշնամին են, այս պատեհութեանն օգուտ քաղելով աւարառութեան նպատակաւ իր մարդիկները ժողովեց և վանայ շրջակայքը գտնուած Պօշգալէ, քօթօր, Կէվէր և ուրիշ գիւղերու վրայ թափեց որոնք աւերեալ խանգարեցան : Ահաւասիկ Ալի խանի մատնութեան վրէժը լուծելու կամ իրենց երկիրները պաշտպանելու համար քիւրտերը տաճկական բանակը թողին և Պարսկական սահմանաց վրայ կը քալեն : Ալի խանի այս ըրածը Կոնստանդնուպոլս պատճառը սա է որ այս անձը Օսմ. բանակին մէջ գտնուող կամաւոր քիւրտերուն հետ դաշինք գրած էր որ մինչև ցվերջ պատերազմի միմեանց ընտանիքը և ստացուածքները պաշտպանեն : »

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆ՝  
ԶԱԽԱՆ ԵՒ ՓԱՌՆԱԿ Ա.

Գրեց ծերունին Գարրիէլ Պատկանեան  
Ընթերցատէր ազգայինք, որ անշուշտ ազգային տաղանդաւոր հեղինակին « Անուշախան » և այլ գործերը կը յիշեն, մեծ հաճութեամբ պիտի կարդան այս նոր գործը որ գարծեալ մեր ազգային պատմութենէն առնուած է :  
Կը ծախուի Ս. Դ. և Եղմամբեան գրատունը Եէնի ճամի Չիլիկիլիէր ճատտէսի թիւ 2, և ուրիշ գրավաճառաց քով :  
Գին 1 ֆր. 30 սանդիմ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԿԵՍԱՐԱՅ  
ԳՈՐԾ ՍՈՒԵՏՈՒՈՍԻ

Թարգմանեաց Ե. Մ. Ս.  
Հայ ժողովրդեան ընթերցատիրութիւնը գոհ ընելու մտքը Մարտիրոսեան ընդհանուր անուամբ հետզհետէ օգտակար և կրթական գործեր պիտի հրատարակենք : Այս անգամ սկիզբ կընենք այս ձեռնարկութեան՝ Երկրորդ կեսը պարտաւորութիւնն ի լոյս ընծայելով թարգմանութիւնը քաջ զգալով այս Մարտիրոսեան օգտակարութիւնը պիտի փութայ արդեամբ քաջալերել զմեզ որպէս զի սոյն ձեռնարկութեան մէջ յարատեւեց :  
Հրատարակիչ :

ՄԱՐԻՕՆ ՏԵԼՈՐՄԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ  
Կ Ա Մ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՓԱՆՔ  
ՀԵՂԻՆԱԿ

Էօթեն որ Մեքսիկո  
Թարգմանեաց Գր. Չէլիկիլիէր  
Սոյն հրահանգի վէսին հայերէն թարգմանութեան Գ. Հատորը Պօլիս հասած ըլլալով, կը գտնուի Ս. Դ. և Եղմամբեան գրատունը Եէնի-ճամի Չիլիկիլիէր ճատտէսի թիւ 2, և ուրիշ գրավաճառաց քով : Գին 2 ֆրանք :  
Ամբողջ գործը չորս հատորէ պիտի բաղկանայ :  
Կը ծախուի Եէնի-ճամի Չիլիկիլիէր ճատտէսի թիւ 2, Ս. Դ. և Եղմամբեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով :  
Գին 1 ֆրանք 25 սանթիմ :

ԽՈՐՀՐԳԱԽՈՐ ԿՂՁԻ  
ՕՂԱՊԱՐ ՆԱԽԱԲԵԿՆԵՐ

Ազգայնոցմէ խիստ լաւ ընդունելութիւն գտնող Անտոնի Չէլիկիլիէրի մէկ ուրիշ հետաքրքրաշարժ և հրահանգիչ գործքն է, թարգմանեալ Մ. Մամուրեան էֆէնտիէ, որուն առաջին հատորը իզմիրէն Պօլիս հասած ըլլալով, կը ծախուի Եէնի-ճամի Չիլիկիլիէր ճատտէսի թիւ 2 Ս. Դ. և Եղմամբեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով : Ամբողջ գործը երեք հատորէ կը բաղկանայ : Գին 2 ֆր :

ՏԵՒԵՆ ԴԵՂԵՐ ԵՆՆԻՆԵՆ ԵՒ ԵՒՐԵՆԻՍ

56 երեսէ բաղկացեալ տետրակ մ'է, յորում կը պարունակուին Հայազգի նըշանաւոր տաճկախօս բանաստեղծին երկերը :

Ամեն Հայ գրավաճառաց քով կը ծախուի ՚ի գին մէկ քառորդ թղթադրամ :

ԱՐԻՒՆԱԼԻ ՄԱՐԻՍՏՈՒՅԻՆ

Սոյն գեղեցիկ վիպասանութեան, որ միայն երկու հատորէ կը բաղկանայ, երկրորդ հատորն ալ իզմիրէն հասած ըլլալով, կը ծախուի Եէնի ճամի Չիլիկիլիէր ճատտէսի թիւ 2 Ս. Դ. և Եղմամբեան գրատունը, և ուրիշ գրավաճառաց քով Գին 2 ֆրանք :

ՎՈՍՓՐԻ ԱՆԳՂՆԵՐԸ  
ԹԱՐԿԱՍԵՅ Ի ԳԱՂ. ԼԵՁՈՒՅ

Առմաշու վնքէն հրատարակուած 130 երեսէ բաղկացեալ սրտաշարժ վէսյ մ'է, որուն նիւթը թիւ Սուլթան Մէհմէտ Բ. օրով Տրպիզոնի յոյն կայսրութեան կործանման և կայսերական ընտանեաց եղերական վիճամին պատմութենէն առնուած է :  
Կը ծախուի Եէնի-ճամի Չիլիկիլիէր ճատտէսի թիւ 2 Ս. Դ. և Եղմամբեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով : Գին մէկ ֆրանք :

Ա Մ Ա Ռ Օ Տ  
ԸՆԴՀ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳՊՐՈՑԱՅ ՉԱՄԱՐ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
Կարգեցողացոց Յանայ, Հոմոլոգացոց և Հայոց ՄԱՍՆ Բ.:

Թարգմանեաց Մ. Մամուրեան  
Այս ընտր և ամենակարևոր դասագրքին Բ. մասը, որ 40 երեսէ կը բաղկանայ, աւարտած և Պօլիս հասած ըլլալով կը ծախուի Եէնի-ճամի Չիլիկիլիէր ճատտէսի թիւ 2 Ս. Դ. և Եղմամբեան գրատունը, և ուրիշ գրավաճառաց քով : Գին 2 ֆր. 30 սանդիմ :

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ  
ԳԱՂԱՅԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

է Մուրա-Վալիս, Համբարձ և է Լեհաստան  
Ուղեւորութիւն յամին 1876  
Արշակայ Մ. Ալթունեան

Ազգին ամենակարևոր պիտոյքներէն մին համարուած վիճակագրութեան մէկ մասը կը լեցնէ սոյն երկասիրութիւնը որ ազգասէր և հայրենասէր սրտի և զգացմանց մէկ կենդանի պատկերն է :

Հեղինակը Մուրա-Վալիսի, Հունգարիա և Լեհաստան պտտելով, տեղոյն հայ ժողովրդեան վարուց և բարուց, ազգային սովորութեանց վրայ տեղեկութիւններ հաւաքել և դանոնք ի լոյս ընծայել է ապագային իրեն շահ մատակարարող փոքրիկ գումարը սոյն գործին սպազրութեանը զոհելով :

Կը փախաքիմք որ սոյն հեղինակին անձնութիւնը օրինակ և գրգիռ ըլլայ շատերու, որով միայն կարելի է Հայոց Ազգին ամբողջ վիճակագրութիւնը պատրաստել :

Կը հրաւիրեմք բոլոր հետաքրքիր ազգայինները որ սոյնէն օրինակ մը առնելով օտար աշխարհաց մէջ գտնուած մեր ազգակից և հայրենակից եղբարց վրայ լիուր տեղեկութիւն ստանան :

Կը ծախուի ամէն գրավաճառաց քով, Գին 3 քառորդ թղթադրամ :

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայրենիք երեքշաբթի և շաբաթ օրերը կը հրատարակուի :  
Տարեկան բաժանորդագինն է մէկ հարիւրնոց թուղթ կանխիկ :  
Վեցամսեայն մէկ յիսուննոց :  
Եռամսեայն մէկ քսաննոց և տասնոց :  
Միամսեայն մէկ տասնոց :  
Ծանուցման տուր երկու դրու է :  
Եմբագրութեան ուղղեալ նամակ կամ զերեւտ չը տրուի :  
Լրագրոյս վերաբերեալ ո և է գիր պէտք է ուղղել առ Տէր-Խմբագիր Մ. Յ. Միլիքեան Բիզա բաշա խան թիւ 1 :

ՏԵՐ-ԽՄԲԱԳԻՐ  
Մ. Յ ՄԵՂԻՔԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Դ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ  
Բիզա վիպա խան թիւ 3